

Այս քաղցր խօսքերուն Գրիգոր իշխանուհուն ձեռքը միայն պագնելով պատասխանեց: Երբ նա Օրիորդին հետ իւր սենեակները քաշուեցաւ, Յուսիկ տարաւ զգրիգոր եւ Չաւեն իրենց համար պատրաստեալ սենեակները, ուր չորս տարվնէ վերջ Գրիգոր կը գտներ փետրալից անկողին, գիշերային զգեստներ եւ իշխանական կենաց ամեն դիւրութիւն, որ Վարդանայ բերդի վերջին երեկոյնն ի վեր բոլորովին մոռցեր էր: Բայց Գրիգոր չի մոռցաւ զգագրիկ՝ իւր գերութեան եւ ճամփու ընկերը, Յուսիկի հետ գնաց զինք տեսաւ, որ թիկնապահաց հետ հանգիստ կը խորդար, եւ նորա մասնաւոր խնամող յանձնեց պատուական մարդը, ու գնաց մտաւ իւր խուցը: